

# ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Առաքինութիւնը՝ օգտակար բաներու գործադրութիւնն է, եւ արարքներուն ու կիրքերուն մէջ վնասակար բաներէ խուսափիլ՝ երկու ծայրերու միջեւ հաստատուած ուղիղ բանականութեան առաջնորդութեամբ: Դարձեալ, առաքինութիւնը հոգիի բարեկարգ ունակութիւնն է, որով մարդը ըստ օրէնքի կը վարուի մտքերու, խօսքերու ու գործերու մէջ, որոնք կը վերաբերին կա՛մ Աստուծոյ, կա՛մ իրեն, կամ ընկերոջը:

Արդարեւ, օրինապահ, բարեպաշտ, արդար ու երկիւղած կը կոչուի ան, որ անթերի կը կատարէ՝ Աստուծոյ կամ բանականութեան լոյսով իր վրայ դրուած օրէնքները, եւ կը մերժէ օրէնքով արգիւտող ամէն ինչ: Սակայն այդպիսի անձ մը, տակաւին չէ եւ չի կոչուիր կատարեալ առաքինի: Քանզի երբ մարդ կատարեալ է, կը պահանջուի, որ ընէ բան մը, որ կը գերազանցէ ընդհանուր կանոնական պատուէրներն ու հարկադրութիւնները:

Իսկ ան որ Աստուծոյ հանդէպ սիրոյ առաւելութենէն կը կատարէ ընդհանրապէս պահանջուածէն աւելի գերազանց բարի գործեր՝ կատարեալ առաքինի կը կոչուի: Անոր վարձքը շատ է ուրիշներուն համեմատ, այնքան որքան բարի գործերով կը գերազանցէ զանոնք: Քանզի «առաքինութիւն» բառը «առաւելութենէն» յառաջացած է, որպէս թէ «ուրիշներէն աւելի բարիք ըրաւ»:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵԿԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

### ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Ուրիշ նամակի մը մէջ կը կարդանք. «Ամուսինիս ծնողքը առաջ յաճախ կ'այցելէր հաւատացեալ ընտանիք մը: Անակնկալօրէն ժամանակ մը ետք այդ հանդիպումներուն վերջ տուին: Պառաւ մը կեսուրիս սորվեցուցեր էր խաղաթուղթով գուշակութիւն ընել, եւ ան յաճախ կը կանխագուշակէր իր եւ ծանօթներու ապագան: Երբ, Աստուծոյ բարեգթութեան շնորհիւ, ուսանող ամուսինս քրիստոնեայ ուսանողներու ընկերակցութեան շնորհիւ Տիրոջ դարձաւ, կեսուրս կարծես խենթացաւ այդ քայլէն: Կը մեղադրէր իր գաւակը, որ այդ ձեւով կը փճացնէ իր ապագան: Երբ ամուսինս չենթարկուեցաւ իր խիստ հրամանին եւ դուրս չեկաւ հոգեւոր ընկերակցութենէն, կեսուրս սկսաւ հետը վարուիլ չար եւ անհնազանդ գաւակի մը պէս: Զաւակին խնդրանքով կեսուրս երբեմն Աստուծաշունչ կը կարդար, եւ խոստացեր էր այլեւս գուշակութեամբ չզբաղիլ, բայց ժամանակ մը յետոյ, ամէն ինչ մոռցած, շարունակեց իր շարագործութիւնը: Իսկհիմա ամբողջապէս հեռացած է ուղիղ հաւատքէն, եւ հանդիպումներ կ'ունենայ ոգետեսներու հետ: Անգամ մը նոյնիսկ անձնասպանութեան փորձ ըրաւ»...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

#### ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐԺԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - E-mail: jerak@live.com

## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԵՐՈՐԻ ՏՈՒԳ Է ՈՒ ԽՕ ՇԱԽԻՆԵՐՈՐԻ ՆՈՅՍ (Ս., 119-105)

ԿԻՐԱԿԻ՝ 26 ՕԳՈՍՏՈՍ, 2012

ԹԻՒ 35

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄՄԱԿՈՍԻ 4.35-41

ՏՕՆ ԳԻՏ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Նոյն օրը երեկոյեան, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եկէ՛ք լիճին միւս կողմը անցնիմք»:

Աշակերտները ձգեցին ժողովուրդը եւ բարձրացան այն մաւակին՝ մէջ ուր Յիսուս կը գտնուէր: Հոն ուրիշ մաւակներ ալ կային:

Յանկարծ զօրաւոր հով մը փոթորկեց ծովը: Ալիքները մաւակին զարնուելով մերս կը թափէին գայն լեցնելու աստիճան, մինչ Յիսուս մաւակին յետաւորաբար բարձի մը վրայ կը բնակար: Աշակերտները արթնցուցին զինք եւ ըսին. «Վարդապետ, հոգո՛ւ չէ՞ որ մենք կը կորսուինք»:

Յիսուս ոտքի ելլելով հովուն աստեց. «Դադարէ՛ք», եւ ծովուն ըսաւ. «Հանդարտէ՛ք»: Հովը դադարեցաւ եւ կատարեալ հանդարտութիւն տիրեց: Ապա Յիսուս դարձաւ իր աշակերտներուն. «Ինչո՞ւ այսպէս վախկոտ է՞ք. տակաւին հաւատք չունի՞՞ք»: Անոնք չափազանց վախցան եւ իրարու կ'ըսէին. «Ո՞վ է արդեօք այս մարդը, որուն նոյնիսկ հովն ու ծովը կը ենազանդին»:

### ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Սո՛ւրբ Աստուծո՛ւ, անմահ եւ հօր. դուն որ սրբաբանութեամբ ու անդադրում օրհնաբանութեամբ կը պաշտուիս հրեղէն եւ անմարմին հրեշտակներուն կողմէ: Մենք, քու ձեռքովի ստեղծուած բանաւոր հօտը, քու առատաբաշխ գթութիւնդ կը հայցենք:

Ընդունէ՛ մեր շրթներէն ու մեր սրտերէն դուրս եկած բանաւոր ընծաները:

Ո՛վ Տէր, մեր միտքերուն մաքրութիւն տուր, սրտերուն՝ զղում, շրթերուն՝ ճշմարտութիւն, աչքերուն՝ արցունք, հոգիներուն՝ ամբօրութիւն եւ մարմիններուն սրբութիւն:

Լեցո՛ւր մեզ ամէն առաքինութեամբ, պայծառ հաւատքով, աներկբայ յոյսով եւ մաքուր սիրով: Եւ զարդարէ՛ մեզ՝ խոհեմութեամբ, ողջախոհութեամբ, արիւթեամբ եւ արդարութեամբ:

Զօրացո՛ւր մեզ, որպէսզի յաղթող ըլլանք Բանասրկուին Հնարքներուն դէմ, կարենանք մարել Զարին բոլոր միացող նետերը, եւ արդարութեամբ եւ աստուածապաշտութեամբ ապրիլ աշխարհի մէջ, ինչպէս որ դո՛ւն կը կամենաս, իսկ այս կեանքէն ետք անճառելի բարիքներդ կարենանք վայելել քեզի՝ Տիրոջդ հետ, որո՛ւն կը վայելեն փառքն ու զօրութիւնը յաւիտեանս: Ամէն:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ԳԻՒՏ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Վստահաբար մեզմէ շատերը լսած են այս տօնին մասին: Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի տօնը ըստ մեր եկեղեցւոյ տօնացոյցին այս տարի կը պուգադիպի Կիրակի, 31 Օգոստոսին:

Միասնաբար ծանօթանանք տօնին:

Արկաղիոս կայսրի օրով (395-408) Երուսաղէմի մէջ գտնուած Ս. Աստուածածնի գօտին յատուկ ուշադրութեամբ ու յարգանքով տարուեցաւ Պոլիս, ուր հաւատացեալները մեծ երկիրդածութեամբ առջեւէն քայլեցին եւ պատուով ու յարգանքով վայն պետեղեցին եկեղեցւոյ մէջ:

Յոյները այդ առթիւ կատուցեցին նոր եկեղեցի մը եւս, կոյսին նուիրուած, եւ գօտին դրին այնտեղ՝ հաւատացեալներու պաշտամունքի առարկայ դարձնելու համար եւ տօնը նշանակեցին Օգոստոս 31-ը:

Հայերու համար յետսամուտ տօն է Գիւտ Գօտույ օրը: Միմէրն կաթողիկոսը, 1774 թուականին, իր հրատարակած օրացոյցին մէջ պետեղեց Գիւտ Գօտույ տօնը եւ այնուհետեւ տօնակատարութեան մաս կազմեց:

### ՍԻՐԵԼ ԲԱՐԵՎԱՍԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԴԱՌՆԱԼ ԱՆՈՐ

Երբ հնարաւորութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտընար: Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկո՛ւր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ինչ կը պատահի քեզի: (Առակած 3:27-28)

## ԱՍՏՈՒԱԾԱԾՐԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ



Հայ Եկեղեցին իր սկիզբէն իսկ յատուկ յարգանք ցուցաբերած է Աստուածամօր նկատմամբ, եւ հայրերու գրականութեան ճամբով վայն ներկայացուցած է իբրեւ «Անարատ տաճար», «Սերովբէ հողեղէն», «Մարմնատեսիլ քերովբէ»: Մեր Եկեղեցւոյ մէջ կը նշուին սուրբ Կոյսին նուիրուած եօթը տարբեր տօներ.՝ Յղութիւն, Ծնունդ, Ընծայումն ի Տաճար, Աւետում, Վերափոխում, Գիւտ գօտույ եւ Գիւտ տփոյ:

Իւրաքանչիւր տօն կապուած է Աստուածամօր կեանքին հետ առընչութիւն ունեցող դէպքի մը, Յղութիւնը՝ Սուրբ Հոգւոյ ներգործութեամբ, Ծնունդը՝ իբրեւ «Երկրորդ Եւա», Տաճար ընծայումը՝ իր ծնողքին՝ Յովակիմի եւ Աննայի ձեռամբ, Աւետումը՝ Գաբրիէլ Հրեշտակին կողմէ, Վերափոխումը՝ իբրեւ երկնաւոր հարս, Գօտիին գիւտը եւ Տուփին գիւտը՝ որուն մէջ իր գըլխածածկոյթը կը դնէ Սուրբ Աստուածածինը:

Հինգերորդ տօնը՝ Աստուածածնայ վերափոխումը. Օգոստոս ամսուան 15-ի մերձաւոր Կիրակին նուիրուած է Աստուածամօր Վերափոխումն:

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

#### ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այս կանոնը կը գրեմք անոնց համար, որոնք անաստուածաբար սուտ վկայութիւն կու տան: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքին մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր»: (Ելք Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:

Առաջին՝ ահեղ ու սուկալի իրողութիւնը այն է որ նշարտութիւնը Աստուծոյ անունն է եւ ամէն բանի գարդն ու աշխարհի պայծառութիւնն է. իսկ սուտ վկան ակերիչ ու կործանիչ է նշարտութեան, որովհետեւ կը վկայէ ո՛չ իր տեսածին եւ ո՛չ ալ գիտցածին մասին:

Երկրորդ, ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէ»ն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմս չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը որ ծնաւ սուտը» (Յով. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօսները եթէ ետ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանջամքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Սդ. Ե. 7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դուռն է, իսկ ստախօս բերանը դժոխքի դուռն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը նշարտութեան վարժեցուցէք, որպէսզի Ս. Հոգին բնակի ձեր մէջ:

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

### ՃՇՄԱՐԻՏ ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆԸ

Ով որ իր անձը կը խոնարհեցնէ պիտի բարձրանայ: Մտք 23:12:

Խոնարհութեան կամ համեստութեան համար աղօթելը եւ խոնարհ կեանք մը ապրիլը բոլորովին տարբեր բաներ են: Խոնարհ կեանք ապրելու մեր փափակը կրնայ մղել մեզ ծառայութիւններ մատուցանելու երբ որ պատեհութիւններ ներկայանան, բայց ծառայութեան կեանք մը կրնայ առաջադրել հպարտութեան: Հեղինակ եւ դասախօս անձ մը սա՛ նկատողութիւնը արձանագրած է. «Մենք կը փափաքինք ձեռք ձեռք խոնարհութիւնը եւ երբ ստանանք գայն՝ յանկարծ կը կորսնցնենք մեր մատներուն մէջէն»:

Ուրեմն, ի՞նչպէս կրնանք գիտնալ թէ ե՞րբ իրապէս խոնարհ կամ համեստ ենք: Չենք կրնար գիտնալ, բայց երբ ուրիշներուն ծառայելը կ'ըլլայ երկրորդ բնութիւն մեզի համար՝ հետեւած կ'ըլլանք Յիսուսի խօսքին, որ կը գտնուի Մատթէոսի աւետարանին 23-րդ գլուխին մէջ: Մատնանշելէ ետք թէ դրպիրները եւ փարիսեցիները կը ձգտէին դիրք եւ համբաւ շահելու, Յիսուս ըսաւ. «Ան որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (համար 12):

Օգտակար կը նկատենք տալ օրինակ մը: Ծերակուտական մը իր պատկանած եկեղեցիին Ս. Գրոց սերտողութեան պահերուն կը մասնակցէր ուրիշ քաղաքացիներու եւ այլ կարեւոր անձնաւորութիւններու հետ: Սերտողութեան աւարտին ամէն մարդ կ'աճապարէր մեկնելու, բայց ծերակուտականը կը մնար հոն՝ աթոռները եւ սեղանները տեղաւորելու:

Երբ ծառայութիւնը մեր սրտէն կը բխի որպէս արտայայտութիւն գութի՝ կ'անհիմն խոնարհութեան մէջ: Մենք չենք գգար թերեւս, բայց Աստուած գիտէ եւ կը գնահատէ:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ**

9.8-19

Տէրը դատավճիռ արձակեց Յակոբի որդիներուն, այսինքն Իսրայէլի թագաւորութեան դէմ. այդ մասին պիտի իմանայ ամբողջ ժողովուրդը, այսինքն Եփրեմը եւ Սամարիայի բնակիչները, որոնք հպարտութեամբ եւ ամբարտաւան սիրտով կ'ըսեն. «Աղիւսէ տուները փրան, ինչ փոյթ, մենք նորերը կը կանգնենք տաշուած քարերով. մայրիներ ու եղեւիններ կը կտրենք եւ աշտարակ կը շինենք մեզի համար»:

Ուստի Տէրը թշնամիներ պիտի յարուցանէ անոր դէմ, պիտի գրգռէ անոր թշնամիները, արեւելքէն՝ ասորիները եւ արեւմուտքէն՝ փղշտացիները, որոնք բաց բերանով պիտի կլլեն Իսրայէլը:

Այսքանով Տիրոջ բարկութիւնը չի ջաւ. անոր ձեռքը դեռ բարձրացած կը մնայ՝ պատժելու համար:

Որովհետեւ հակառակ իր ստացած հարուածին ժողովուրդը չզղջաց, չդարձաւ ու չփնտուեց Երկնային Զօրքերու Տէրը:

Ուստի Տէրը մէկ օրուան մէջ պիտի կտրէ Իսրայէլի գլուխն ու պոչը, մեծն ու պզտիկը:

Գլուխը՝ ծերերն ու աչքառու մարդիկն են, իսկ պոչը՝ ստութիւն սորվեցընող մարգարէները: Առաջնորդները իրենք մոլորած՝ երանիներով մոլորեցուցին այս ժողովուրդը, որպէսզի կլլեն գայն:

Այդ պատճառով ալ Տէրը անոնց երիտասարդներուն պիտի չխնայէ. անոնց որբերուն եւ այրիներուն պիտի չողորմի, որովհետեւ բոլորն ալ անօրէն են եւ չար, անոնց բերանները միայն անիրաւութիւն կ'արտաբերեն:

**Շարունակել Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ**

**ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ**

1.1-11

Ես, Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը, եւ Տիմոթէոս՝ մեր եղբայրը, կը գրենք ձեզի՝ Կորնթոսի մէջ հաստատուած Աստուծոյ եկեղեցիին եւ ամբողջ Աքայիայի մէջ գտնուող քրիստոնեաներուդ: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ հայրաբար կը զթայ եւ որպէս Աստուած կը մխիթարէ ու կը զօրացնէ մեզ մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք կարենանք Աստուծմէ մեր վայելած օգնութիւնն ու մխիթարութիւնը տալ անոնց՝ որոնք ամէն տեսակի նեղութեանց մէջ են: Որովհետեւ, որքան շատ բաժնեկից ըլլանք Քրիստոսի չարչարանքներուն, այնքան աւելի մեծ պիտի ըլլայ իր օգնութիւնն ու մխիթարութիւնը մեզի: Մենք նեղութեանց կ'ենթարկուինք՝ ձեզի օգնելու եւ Աստուծոյ փրկութիւնը ձեզի բերելու համար. եւ եթէ Աստուած կ'օգնէ մեզի՝ կրկին ձեզի օգնելու համար է, որպէսզի մեր օրինակով սորվիք թէ Աստուած ձեզ ալ պիտի զօրացնէ՝ որ համբերութեամբ կարենաք տանիլ այն չարչարանքները որ մենք հիմա կը կրենք: Ուստի ձեր վրայ հաստատուն յոյս ունինք, զիտնալով որ քանի մեր չարչարանքներուն մասնակից էք՝ մեր ունեցած մխիթարութեան ալ մասնակից պիտի ըլլաք:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑՄՍՈՒԹԻՒՆԸ  
ՄՍՏՈՒՄԾԱՇՈՒՄԶԷՆ:**